

## **Արձանագրություն թիվ 12**

*Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ ՊՈԱԿ-ի մանկավարժության ֆակուլտետի  
17.06.2015 թ. խորհրդի նիստի*

Նիստին մասնկացում էին խորհրդի 18 անդամներից 12-ը՝ Ռ. Մարդոյանը /մանկ.ֆակ. դեկան, խորհրդի նախագահ/, Լ. Գևորգյանը /քարտուղար/, Լ. Հակոբյանը Ն. Գրիգորյանը, , Լ. Ղուկասյանը, Կ. Եղոյանը, Կ. Սահակյանը, Լ. Աթանեսյանը, Յ. Կոչոտյանը, Ա. Եղյանը, Ա. Սերոբյանը և ֆակուլտետի որակի պատասանատու Ի. Շուխյանը:

Նախագահ՝ դեկան Ռ. Մարդոյան:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ –

1. Հեռակա համակարգի ուսանողների ուսանողների երկրորդ կիսամյակի քննատոմսերի հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ – Դեկանի հաղորդումը հեռակա համակարգի համակարգի ուսանողների ուսանողների երկրորդ կիսամյակի քննատոմսերի հաստատման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Լ. Աթանեսյանը, Կ. Սահակյանը, Լ. Ղուկասյանը, Լ. Հակոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել համակարգի ուսանողների ուսանողների երկրորդ կիսամյակի քննատոմսերը:

2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ –

1. ԼՍԵՑԻՆ - Դեկանի հաղորդումը պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարակարգի շնորհման ընթացակարգի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - . Աթանեսյանը, Կ. Սահակյանը, Լ. Ղուկասյանը, Լ. Հակոբյանը, որոնք ներկայացրեցին ամբիոնների քննարկման արդյունքները՝ համապատասխան քաղվածքներով: Ընդհանուր առմամբ արվեցիօն հետևյալ առաջարկությունները՝

- Օտար լեզվի ցանկացաշ սերտիֆիկատ համարել ընդունելի /անգամ մինիմումի արդյունքները/,

- Լեզվաիմացության մեջ ավելացնել այլ լեզուների ցանկը /ռուսերեն, ֆրանսերեն/,
- Տրված փաստաթղթին կիից ներկայացնել յուրաքանչյուր տարակարգից օգտվողի արտոնությունները, անցումը տարակարգից տարակարգ,
- Տարակարգը ներկայացնելիս մասնագիտական բոլոր այլ վերապատրաստումները ևս հաշվի առնել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առաջարկությունները ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն:

*Նիստի նախագահ՝ մանկ. ֆակ. դեկան՝ /Ռ. Մարդոյան/*

*Քարտուղար՝ /Լ. Գևորգյան/*